ԵՕԹՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ․ ՆԻՒ ԵՈՐՔ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 15, ԹԻՒ 19. ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 140

ՀԱՅՔ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԻՍՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and Oriental Peoples.

Edited by M· S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Յունաստանի փորձառութիւնը՝—ՀԱՅՔԸ 1898 թուականին.—Վիճակագիր Ամերիկայի Հայոց.—Քառեակ նիզակակցութիւն մը ընդդէմ Թուրքիոյ.—Նամակ Կ.Պոլսէն.—Նամակ Սալմաստէն. Հայընդդքուրդ ընդհարումը.—Ակին ջարդին պատմութիւնը·—Ամերիկայի Հայոց ամունը աւրուա՞ծ է.—Այլևայլք.—

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ

Հելլենաց գլխուն եկաւ ազգային աղէտ մը բազում նկատմամբ նման մերինին։ Նոքա ևս Եւրոպայէն խաբուեցան ու Թուրքէն ծեծ կերան չարաչար։ Պատերազմի ծանր ծախքերն անելէ յետոյ ծանրագոյն ևս տուգանք մը, 4 միլիօն Օսմ․ ոսկի վճարել յանձն կ'առնուն— գումար ոչ շատ փոքր քան Հայոցս նիւթական կորուստը ջարդերու միջոցին։

Յոյնք հաշտութեան պայմաններն յոյժ դժընդակ կը գտնեն։ Ոմանք կ'աղաղակեն վեհանձն զայրոյթիւ թէ Տերութեանց հաւանութեամբ որոշուած այդ վիրաւորիչ պայմաններն յանձն առնլու տեղ՝ պէտք է վերսկսիլ պատերազմը Թուրքին դէմ։ Բայց Հելլենաց խորհող և ոչ լոկ զգացող մասը կը մերժէ այդ «վեհանձն» բայց անխոհական թելադրութիւնը։

Ֆռանսա ալ 1871 ին անցաւ փորձանքի այդ բովէն։ Հայրենասէրք ոմանք կ'ուզէին որ յաղթուած և ուժասպառ Ֆռանսան շարունակէր պատերազմը փոխանակ Գերմանիոյ վիրաւորիչ պայմաններն ընդունելու։ Սակայն զգօն հայրենասէրներն տեսան այն ատեն, ինչպէս այժմ լուրջ Յոյները կը համոզուին թէ, այդ պայմանաց մէջ, չարեաց փոքրագոյնն է վիրաւորիչ հաշտութիւնը ոչ թէ մահացու պատերազմը։

Մեր ազգին մէջ ալ ջարդերէն ի վեր նմանօրինակ բաժանում մը կայ կարծեաց։ Ոմանք կը պոռան թէ պէտք է «յեղափոխութիւնը» շարունակել գոնէ ռումբ նետելով։ Այլք, յորոց միջի և ՀԱՅՔԸ, կը պատասխանեն թէ նկատելով ազգին ուժասպառ վիճակը և միջազգային աննպաստ կացութիւնը՝ հարկ է սպասողական դիրք բռնել և միայն դիւանագիտական միջոցներով ջանալ ամոքում մը բերել մեր ցաւերուն։ Անոնք որ միայն իրենք զիրենք յեղափոխական կը հաշուեն, լսելով մեր խրատը կը կարծեն պարզմտօրէն թէ մենք փոփոխամիտ ենք։ Ո՛չ, ո՛չ, Պարոններ։

Ֆռանսա մոռցած չէ Ալզաս Լոռէնը. Յունաստան չպիտի մոռնայ զԹուրքիա, և ոչ Հայքս երբէք պիտի մոռնանք մեզի եղած աղգային նախատինքը: Բայց եթէ ուժեղ Ֆռանսա յանձն առաւ նախատական պայմաններն հաշտութեան և 30 տարիէ ի վեր կը պատրաստուի և կը համբերէ սպասելով պատմական նպաստաւոր պարագայից, մենք Հայքս, նուազ ուժով, ինչո՞ւ չենք հասկնար սպասելու և պատրաստուելու հարկը:

Բացուած է Հայքի ութերորդ տարւոյ բաժանորդագրութիւնը

ՀԱՅԿԸ

պիտի հրատարակուի 1898 ին
ինչպէս այս տարի
ամիսն երկու անգամ
տարեկան բաժանորդագինն է
երկու տոլար
կամ
տասը ֆրանք
ամեն երկրաց համար
վճարումը կանխիկ է

Դրամ կրնայ յղուիլ մընի օրտրրով, մանտա տը փոսթով, փոխ—գրով, կամ ապահովագրեալ նամակի ծոցով Ֆռանսական դէմպռ բոսթ ուղարկելով առ խմբագիրն

Dr. M. S. Gabriel
341 West 23d st., New—York

Ցղմունք մեզի կը հասնին եթէ նոյն իսկ սա պարզ հասցէով ուղղուին—Editor of Haik, New York, E. U. d'Ame'rique

Կը յուսանք թէ օտար երկիրներու մեր յարգոյ բաժանորդները պիտի փութան, ինչպէս իրենցմէ շատերուն բարի սովորութիւնն է, յղել մեզ իրենց բաժանորդագինը, այնպէս որ Յունուարէն առաջ մեր ձեռքը հասնի:

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՀԱՅՈՑ

ԻԲ.—Bridgeport, Conn.

Աստ կը գտնուին միայն վեց Հայ, ամէնքն ալ երիտասարդ, ամէնքն ալ բաւական բարեկեցիկ:

ՄԿՐՏԻՉ ԹԱԴԷՈՍԵԱՆ

ՌԱՌԵԱԿ ՆԻՋԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԹՈՒՐՔԻՈՅ ԴԷՄ

Մեզի համար ամենէն կարևոր լուրը, որ դեռ հաւաստեաց կարօտ է, թէպէտ յոյժ ճշմարտանման, է այն՝ թէ քառեակ նիզակակցութիւն մը կամ գէթ քառեակ հասկացողութիւն մը գոյացած է Ֆռանսայի, Ռուսիոյ, Գերմանիոյ և Աւստրիոյ մէջ՝ վերաբերութեամբ Արևելեան խնդրոյն, այնպէս որ եթէ նոր պատահականութիւններ առիթ ընծայեն Թուրքիոյ բաշխման ձեռնարկելու, չորս մեծ պետութիւններն միասին պիտի մխին ի գործ և արդէն նշանակած են իւրաքանչիւրի բաժինը:

Այս քառեակի համաձայնութեան դիւրին մէկ կէտը բնականօրէն յայտնի կայացած պէտք է լինի որ Անգլիա ինչ և իցէ մասնակցութիւն չունենայ լինելիք գործողութեանց մէջ և ոչ հողային բաժին:

Կը կարծուի թէ Զարին մօտալուտ այցելութեան նպատակն ի Հռովմ է ջանալ բերել ի նիզակակցութիւն նաև զԻտալիա:

Այս քառեակ հասկացողութեան ակնարկելով էր որ մեր Օգոստոս 1 ի թուոյն մէջ «մեզի հաղորդուած սակայն մամլոյ մէջ լոյս չտեսած լրոյ մը նայելով» կարծիք կը յայտնէինք թէ Ռուսիա կը մտածէ Թուրքիոյ դէմ գործել բայց ոչ խօսիլ:

Ռուսիա կը ճանաչէ Թուրքիոյ գինուորական զօրութիւնը, ուստի և չուզեր այս անգամ առանձին չափուիլ անոր հետ և յաղթել: Յաղթել բաւական չէ, պէտք է վերջ տալ, սպաննել այդ չարագործ թշնամին մարդկութեան: Առ այդ մեծ Տէրութեանց համաձայն և միահամուռ գործողութիւնը հարկաւոր է, և եթէ Նիկողայոս Բ. Կայսրը այդ իմաստուն կերպով լուծէ Արևելքի կնճիռն և ի միջոյ բառնայ քաղաքակրթութեան անիծապարտ ու արիւնաթաթաւ քարընդոտը—Օսմանեան իշխանութիւնը, պատմութեան մէջ անմահ և յաւէրժ օրհնելի անուն մը կը թողու:

Օսմանցիք յաղթեցին Յունաստանի, Սուլթանը փքացած է, Թուրքերը գոհ և ուրախ են. ի՞նչ է պատճառը որ ազատական Թուրք կուսակցութիւնը անհանգիստ և դժգոհ է. պատճառը այս կարևոր քառեակ համաձայնութիւնն է որ եթէ դեռ գոյացած ալ չլինի, պիտի գոյանայ օր մը,

ոչ հեռաւոր ապագայում:

Միթէ ինքն Համիտ իրազեկ չէ՞ այսմ: Անշուշտ է, բայց ճակատագրին որոշմանց ապաստանած՝ կը շարունակէ ընթանալ դէպ ի կորուստ. դեռ անխղճութեամբ կը հարստահարէ հայ ազգը, Պոլսէն կը վռնտէ գաւառայի խեղճերը դէպ իներսերը, թշուառ որբերուն պատշած հոգածութեանը համար ո և իցէ դիւրութիւն չ'ընծայեր, կրթական ընկերութիւններուն անգամ թոյլ չի տար հանգանակութիւն ընել: Ի՞նչ կը կարծէ, արդեօք, միթէ Եւրոպա յաւիտեան պիտի համակերպի՞ Ջարին և խաւարին այդ իշխանութեանը արիւնախանձ քմահաճոյիցը: Բա՜ւ լիցի:

ՆԱՄԱԿ Կ.ՊՈԼՍԷՆ

(Հայքի յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, Սեպտ. 20.

Ըստ կայսերական հրամանի չքաւորեալ ժողովրդէն քանի մը տարի տուրք չառնուիլը կեղծիք մ'է. ամենուրեք հարկ կը հաւաքեն թրքական խստութեամբ:

Երկրագործ դասակարգը առանց անասնոյ և առանց գործիքի՛ մնացած է. խեղճերու մեծ մասը դեռ կիսամերկ են և հանգստեան անկողին չունենալով՝ յարդի դէզերու մէջ կը գիշերեն:

Հայ վաճառականք ընդհանրապէս սնանկացած կամ աղքատացած են: Թուրքերն կը շարունակեն ծախել իրենց կողոպտած ապրանքներն և նոյն իսկ նոր վաճառքի ապսպրանքներ կ'ընեն ի ձեռն հայ գործակալաց: Թուրք վաճառատանց գըլխաւոր խանութպանը միշտ հայ մ'է, շատ անգամ տետրակներն իսկ հայեվար կը բռնուին:

Հայ արհեստաւոր մասն բաղդատաբար աւելի հանգիստ է, զի քաղաքաց մէջ լինելով նուազ ենթակայ է կողոպտուելու, և իսլամ տարրը միշտ իրեն պէտք ունի:

Սեբաստիոյ առաջնորդը որ գաւառաց անասելի թշուառութեանը և որբոց ողբալի վիճակին ականատես է, Պոլիս եկած է համոզելու համար Պատրիարքն ու ժողովականներն որ անմիջական դարման մը տանին այս որբերուն, և ի հարկին դիմեն Սուլթանին: Ժողովականք հազիւ բարեհաճեր են վերջապէս իւր տեղեկագիրը կարդալ, և խնդիրը կարճ կապելու համար նշան մը առնել տուին: Պետրոս եպիսկոպոսի առաջարկն սա է որ հալեցնեն վանորէից և եկեղեցեաց ոսկեղէն և արծաթեղէն զարդերն և որբանոցներ բացուին այդ կերպով գոյացած դրամով:

Գաւառներու մէջ կրօնափոխութեան հոսանքը յառաջ կ'երթայ: Պատրիարքարանէն հովիւ և առաջնորդ կը խնդրեն, բայց մայրաքաղաքիս մէջ ամբարեալ եկեղեցականներն չեն ուզեր իրենց տեղէն շարժիլ, չեն անսար Օրմանեանի պէս թոյլ Պատրիարքի մը ձայնին: Այժմ համայն Թրքահայաստանի մէջ միայն երեք եպիսկոպոս կայ, մի հատ ի Մեծ Հայս (Կտուցի մէջ,) մէկ ի Փոքր Հայս (Կեսարիա), և մէկ վ Միջագետս (Եդեսիա), մինչդեռ Կ. Պոլսոյ մէջ սոցա թիւը տասնուվեցի կը հասնի, իսկ վարդապետ կոչուածները կարծեմ 60ի չափ ըլլալու են:

Կրթական գործն ալ խեղճ վիճակ ունի: Միացեալ Ընկերութեան վարժարան մասամբ փակ են, միւսներուն ալ մատակարարութիւնը գոհարար չէ: Ընկերութիւնը հանգանակութիւն ընելու և պարահանդէս տալու արտօնութենէն զուրկ կը մնայ. գործադիր ժողովը քանիցս դիմումներ ըրաւ Պատրիարքարանի և Քաղ. ժողովոյ որ գոնէ հանգանակութեան մը հրաման ստանայ, բաղբաղանօք ժամանակ կ'անցունեն: Եթէ այս անտարբերութիւնն շարունակուի, ընկերութիւնն իւր վախճանին կը գտնէ ի մօտոյ:

Օրմանեան շաբաթն երկու կամ երեք անգամ միայն Պատրիարքարան կուգայ, և մի քանի ժամէն կը հեռանայ. ստէպ կը զգայ հանգստի պէտքը: Բայց Կիրակիները պատարագ ընելէն չի յոգնիր, և ոչ բարեմաղթութիւններ ընելէն վասն կենաց Սուլթանին որ գինքը շքանշանով զարդարեր է:

Վերջերս ոստիկանութեան դռնէն մի Ցանձնաժողով կազմեցին ի Պատրիարքարան և անոր յղեցին 69 գաւառացի Հայերու անուններն, առաջարկելով որ այդ անձանց կողմանէ երաշխաւորութիւն առնէ անվայել ընթացքի մէջ չգտնուելու և կառավարութեան դէմ չմեղանչելու: Անշուշտ քիչ ատենէն Պատրիարքարանը Ոստիկանութեան մի ճիւղն պիտի համարուի:

Մուրատ ազատականը որ հոս եկած էր, շատ ազատականներու անունները

տուած է և հազարաւոր Թուրքեր ձերբակալուած են, որոց մի կարևոր մասն սոֆԹաներ են։ Վերջերս սոքա կայսերական ներման արժանացան, իսկ զդասալիքն Մուրատ խեղդամահ ըրած են։

ՀՈՎ

ՀԱՅԸՆԴՔՈՒՐԴ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ

ԹՈՒՐՔԸՆԴՊԱՐՍ

ՍԱՀՄԱՆԱԳԼԽՈՑՆ ՎՐԱՑ

ՆԱՄԱԿ ՍԱԼՄԱՍՏԷՆ

Այս նամակը, Օգ. 30 թուականաւ, ուղղուած է բարեկամի մը ինիւ Եորք՝ (Անգլիերէն լեզուաւ։)

Յուլիս 21 ին, յետ երկար պատրաստութեանց, 200 հետևակ և 25 ձիաւոր Հայեր գնացին Քրդաց վրայ։ Երրորդ գիշերը հասան վրանին առջևը այն անգութ Քուրդ ցեղապետին որ անցեալ տարի այնքան հայ երիտասարդներ կոտորեց Վանէն Սալմաստի ճամբուն վրայ։ Մեր կամաւորները բարեբաղդաբար վրաններուն մօտ հասան առանց որ թշնամին իրազեկ լինէր։ Բարբարոսներն կռուելու ժամանակ չունեցան, կէսք սպաննուեցան և կէսք փախան։

Պարսկական զօրքը չատ մօտ կը գըտնուէր վայրին, այնպէս որ կրնային իմանալ թէ ինչ անցք յանցնել էին, բայց խոչընդոտն չեղան Հայոց ձեռնարկին։ Քրդերն Օսմանցի էին իսկ Հայերը անմիջապէս վերադարձան ի պարսկական հող։

Օսմ. կառաւարութիւնը Պարսկաստանէն պահանջեց խռովարարները, բայց դըժուար էր գտնել զանոնք. պահուած էին։ Գիւղացիք տուժեցին և դեռ փոթորիկն անցած չէ։

Պարսիկ կառավարութիւնը 20 հոգի ձերբակալեց, որոնք դեռ իբանոի են։ Ոմանք Ռուսական հպատակ էին, հիւպատոսն ազատեց զանոնք։ Մի քանին Օսմ. հպատակ են, թուրք հիւպատոսը պահանջեց զանոնք. բայց փառք Տեառն, կը լսեմ այսօր թէ հիւանդացեր է։

Քրդերն սպառնացան գալ աւերել Սալմաստի գիւղերն ի վրէժ։ Գոնէ երկու գիւղ, Լերան մօտ, զարկին, և ի միում սպաննեցին իբր 100 Հայ և 17 Պարսիկ և յափշտակեցին բազում ինչք։ Ի միւսում, սպաննեցին 4—5 հոգի և քանի մը անձ վիրաւորեցին։

Կը տեղեկագրուի թէ 157 Քուրդ ըսպաննուած է և 79 վիրաւորուած։ Միայն 12 Հայ մեռած է և ութը՝ վիրաւորուած։ Վիրաւորներն ինձի բերին ի դարման, զորս դարմանեցի ծածուկ...։ Այս վիրաւորեալներուն և ոչ մին պիտի մեռնի։ Անոնցմէ մին չորս տեղէ վիրաւորեալ է, և հիմա գրեթէ բուժուած է։ Տասը օրէն ամենն ալ կը բուժուին, բաց յերկուսէն որք աւելի երկար ատեն խնամուելու են։

* * *

ԱԿԻՆ ՉԱՐԴԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(Տես թիւ 10՝ 12 և 13)

Զինուորաց Կատակերգութիւնը

Քրդաց խումբը տափուռէն կը յառաջանայ, հոն զօրքերն կը կասեցնեն լեռնցիներու յառաջխաղացումն. երկուստեք հրացան կ'արձկուի քանիցս և քիւրտերն կը նահանջեն։ Յոյսը կը վերածնի սրտերու մէջ, քիւրտերն ետ կը դարձուի՞ն, քաղաքը պիտի ազատի՞։ Պատրանքը չատ չի տեւեր սակայն. Տափուռէն քաշուող Քրդերն քիչ յետոյ գերեզմանատունն կը տեսնուին. վերի թաղին վրայ յարձակիլ պէտք է եղեր։ Հոն գերեզմանատունն ալ Քրդաց և զօրաց միջև կեղծ հրացանաձգութիւն կը լինի քանի մը վայրկեան, երկու կողմէն օդը կը պատժեն։ Ջարդը կը սկսի երբ որոշ տեղէ մը չորս հրազէն կը պարպուի և փողահարն ալ յարձակման նշանը կուտայ։ Մէկ կողմէն դռներն կը խորտակուին և միւս կողմէն շուկան և այլ ուրեք տէլլալ կը կանչէ թէ բան չկայ խանութ եկէք...

Ջարդը

Ժամ երկուքուկէսի ատեններն էր երբ սոսկալի ջարդը սկսաւ. բոլոր փողոցներն մեծ քաղաքի մը փողոցներուն նման բազմամարդ եղած են, տեղացի բոլոր թրքերը, զօրքերն, Քրդերն և որ աւելին է քանի մը հազար ալ մօտակայ և հեռակայ թուրք գիւղացիներ, ամենն ալ դուրսն են։ Սպանութեան և կողոպտման գործը անսովոր եռանդով յառաջ կ'երթայ. հրացան, սուր, վեց հարուածեան, դանակ,

ճոկան, ինչ որ կայ, առնողն փողոցն է. Հայն սպաննել, զարնել, կոխոտել նուիրական պարտականութիւն մ'է։ Թուրքերէն ոմանք Հայ մը կը մորթեն և արիւնն ափիկ ափիկ կը խմեն որպէս զի քաջանան մոլեգնին, կատղին։

Հայն ի՞նչ կ'անէ. անզէն, անպաշտպան, գրեթէ յանկարծակիի եկած իւր կամ ուրիշի մը տանն մէկ մութ անկիւնը քաշուած կուլայ ու կ'աղօթէ։ Անօգուտ արցունք։ Զոհերն կ'իյնան, կը փռուին թշնամւոյն առջև անխօսուն։ Հարիւրաւոր հրազէն մէկէն կը պայթի քաղաքին մէջ ամեն տեղ հուր և սուր կայ, մին քան զմիւսն սոսկալի և անողոք։ Թուրք խուժանը ամեն փողոց բռնած է, ամեն անկիւն կը թափանցէ. մուտերով ու լուցկիներով զինեալ ամենամթին խորշերն կը խուզարկեն և վայ այն արուին որ իրենց ձեռքն կ'իյնայ, անմիջական և սոսկալի մահ։ Թափուած արիւնն ես քան զես կը մոլեգնէ զիրենք, դիմադրութեան իսպառ չգոյութիւնն կը լրբացնէ զիրենք, աչքերուն մէջ կատաղութեան հուրն կը ցոլանայ. այն վատոգի, անպիտան Թուրքեր առիւծի են փոխուեր, կը զարնեն կը կոտորեն անդադար. ո՛վ որ չատ սպաննէ աւելի պատիւ պիտի ունենայ, աւելի սիրելի պիտի լինի մարգարէին։ Գոռ ու գոչումն, աղաղակն, հայհոյութիւնք, կողոպուտի համար եղած կռիւներն, հրազինուց պայթումն, ամեն ինչ միանալով դժոխային ժխոր մը կը պատճառեն։

Ժամերն կ'անցնին առանց բնաւ մեղմացում յառաջ բերելու։ Այն Հայերն որ կը խորհէին թէ քանի մը ժամու խնդիր էր և թէ կարգ մը երիտասարդաց սպանութեամբը պիտի վերջանար, սոսկալի կերպիւ սխալած էին. ջարդը անխտիր էր և օրերու համար է եղեր և ոչ ժամերու։ Թշնամւոյն առաջ կ'իյնան նախ անոնք որ խորհելով թէ իրենց բան մը չպիտի ընեն, տեղերնուն չարժած չէին. այդ ստորակարգ մարդոց՝ որք ընկերութեան մէջ կշիռ և կարեւորութիւն չունին՝ ո՞վ ինչ պիտի անէ, ամենս ալ այդպէս կը մտածէինք և ամենս ալ սխալած էինք. այն որ Հայ էր պէտք է մեռնէր...

Երեքշաբթի առաւօտ ջարդին հետ հրդեհն ալ կը սկսի. յատկապէս որոշուած մարդիկ քարիւղի տակառներն ուսերնուն վրայ բարձած՝ որոշեալ թաղերն կը հերդեհեն. վերի թաղն ու վարի թաղի լաւ տեղերն առտուն կանուխ կը մատնեն բոցերուն, և ժողովուրդն ո՞ր չարիքէն պէտք էր փախչիլ։ Ցուսահատութիւնն սոսկալի էր. վերի թաղն, «Քէօյ Պաշին», զուտ հայաբնակ գրեթէ 600 տան չափ էր, չորս կողմէն կը բռնկցնեն այնպէս որ քիչ մը վարանողներն իրենց սիրելի բնակարաններու բոցերուն մէջ մոխիր դարձան։ Թաղեցիներու արուներն ընդհանրապէս իրենց ունեցածն առնելով գացեր են հարիւրապետին քով, նա խոստացեր է զիրենք պահել (վերի թաղի Նարեկեան դպրոցն ալ զօրանոցի փոխուած էր և սպայք կը բնակէին խուրձն. կերակուրն իսկ կարգաւ թաղեցիք կուտային. այդ հարիւրապետ Մուստաֆայ Աղան և տեղակալն Ղատիր անուն մի երիտասարդ Թուրք, կ'ըսեն որ իրենց քով երթան և պիտի պաշտպանեն. չէ՞ որ տասը ամիսէ ի վեր կը պաշտպանէին արդէն) երբ հրդեհն կը սասկանայ կիներ և տղաքներ ալ այս ու այն կողմէն կը փախչին հովտիքն։ Ջարդի սաստկացած պահուն նենգամիտ հարիւրապետն կ'ըսէ որ զիրենք կառավարութիւնն պիտի զրկէն, և հետերնին հինգ—տասը զինուոր դնելով կը ճամբէ։ Հարիւրաւոր այր, կին և տղաքներ՝ թրքական գթութեան ապաստանած՝ ոտրուն և երկար ճամբէ մը կ'առաջնորդուին դէպ ի կառավարական չէնքն։ Երբ կը հասնին Մէզին ըսուած տեղն որ թրքաբնակ թաղ մ'է, հոն անցք մը կայ վրան գոց և նեղ. Հայք երբ կը մտնեն այդ անցքը, սոսկալի ջարդ մ'է կը սկսի. վարէն և վերէն զօրքեր, Թուրքեր, գիւղացիներ կը յարձակին այս բազմութեան վրայ. թէև կին սպաննելու հրահանգ չկայ, բայց այդ չփոթութեան մէջ ամենն ալ կը զարնուին. փախչիլ ուզողներն զիրար կը կոխոտեն, բայց ո՞ւր փախչիլ, կարելի՞ է մթէ ազատիլ, հոն դիապատ կը փռուին այնքան կտրիճ երիտասարդներ, չափահասներ, կիներ, տղաներ՝ անզէն այդ հօտն որ իրենց յանձնուած է և կ'երթայ ուր որ կը տանին, կը զարնուի և արիւնն առուակի պէս կը վազէ. հազա՛ր ափսոս որ այն քաջերն այդպէս նենգութեան կը զոհուէին։ Կարելի՞ է երևակայել այդ անցքին մէջ տիրող սարսափը, մահուան կ'երպն, վերջին վայրկեանի վրէժինդրական զգացումն...

(Շարունակելի)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՆՈՒՆԸ

ԱԻՐՈՒԱ՞Ծ Է

Եւրոպայէն ազգային մը կը հարցնէ մեզի· — «Ամերիկայի Հայոց անունը շատ աւրուած է կ'ըսեն. ճշմարի՞տ է, և եթէ իրօք անանկ է, չի՞ կրնար դարման ըլլալ:

Խմբագրութիւնս երկու աղբիւր ունի տեղեկութեանց, որոց վրայ կրնայ հիմնել կարծիքը այդ մասին. մէյ մը Հայ թղթակիցներու նամակներն, երկրորդ՝ Ամերիկացի ծանօթներու կողմէ բանիւ բերանոյ իրեն եղած դիտողութիւնները:

Եւ այդ կերպով կազմուած մեր կարծիքը աւասիկ· —

Հայոց վրայ նպաստաւոր համարում ունեցող Ամերիկացիներ շատ են: Անցեալներ Ամերիկացի երէց մը ինծի պատմեց հետևեալը. «Հանրակառքի առաջնորդ մը ուշադրութիւնս գրաւեց իր քաղաքավարի կերպերովը. ես ինծի ասի՝ սա մարդը Հայու քաղաքավարութիւն ունի. և իրեն հարցնելով՝ հաւաստեցի թուիքս, իրօք մարդը Հայ էր:»

Աւելցնենք սա պարագան թէ յիշեալ երէցը քանի մը Հայ միայն ճանաչեր է: Ընդհանրապէս սակաւաթիւ Հայերու հետ ծանօթացած Ամերիկացիք լաւ, մինչև իսկ շատ բարձր համարում ունին անոնց վրայ:

Ահաւասիկ Ամերիկացւոց աննպաստ դիտողութիւնները մերայնոց մասին —

1. Բաւական մաքուր չեն.

2. Առևտուրի մէջ չանչանաբան են և շատ ժամանակ կ'առնուն ու քիչ չահ կուտան:

3. Իրարու դէմ շուտով դատ կը բանան՝ կ'ասէ փաստաբան մը:

Այս թերութիւնները յայտնապէս աբնելեան ժողովրդոց հասարակ եղող թերութիւններ են:

Ջենք կարծեր թէ Ամերիկայի Հայոց անունը ընդհանրապէս անպատիւ կամ աբատաւոր կը նկատուի մեզ դող հանելու չափ. բայց Հայերը Ամերիկացւոց, Ֆռանսացւոց, Գերմանացւոց, Շուէտացց չափ քաղաքակրթուած չեն նկատուիր, անոնց չափ չեն յարգուիր. և այս անչուշտ արդար է: Մենք անոնց հաւասարելու համար պարտինք քիչ մը աւելի մաքրասէր, տոկուն և վեհանձն ըլլիլ:

***

ԱՅԼԵՒԱՅԼՔ

ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ՆԻՒ ՆՈՐՔ

Հոկտեմբեր 2ին Նիւ Եորքի Հայերն երկրորդ անգամ ժողովեցան ի կազմակերպել մի բարեգործական ընկերութիւն: Ազգային մը ատենապետ ընտրեցին նոյն ժողովին համար և լսեցին առժամանակեայ Յանձնախմբին տեղեկագիրը, քննեցին ընկերութեան ստուերագծեալ կանոնագիրն և վերջապէս զՊատ. Հայկունի և ժողովին ատենապետն քուէարկութեամբ ընտրեցին իբրև կազմակերպիչք միայուն դիւանին:

Ներկայ ազգայիններէն Տեարք Արզումեան, սարկաւագը և Պատ. Հայկունի ատենախօսեցին այսպիսի ընկերութեան մը անհրաժեշտ պիտանութիւնը ջատագովելու:

Անդամ գրուած են արդէն իբր 90 Հայեր, երկու սեռէն:

Քիչ օրերէն նորէն ժողով պիտի ունենայ ընկերութիւնը և նորակազմ դիւանը պիտի ներկայանայ և անցնի պաշտօնին գլուխը:

***

ՀԱՅՈՑ ԼՍԱՐԱՆ Ի ՌՈՒԷՍԹ ՀՕՊՕՔՆ, Ն. Ճ.

Ռ. Հօպօքընի մէջ իբր՝ երեք հարիւր Հայերու գաղթականութիւն մը կայ այժմ: Տէր Մրրեան քահանայն և երիտասարդներէն խումբ մը ձեռնարկած են շարժել այդ Հայերը իրենց պարտականութիւնները աւելի լաւ կերպով կատարելու:

Կազմուած է Հոգաբարձութիւն մը, որոյ առաջին հոգն եղած է Լսարան մը հիմնարկել: Առաջին լսարանը տեղի ունեցաւ Հոկտ. 9ին, կիրակի օրն: Պրն. Թաշճեան դաշնակ ածեց և երիտասարդաց խումբ մը երգեց շատ ախորժելի կերպով: Նիւ Եորքէն ՀԱՅՔի խմբագիրն հրաւիրուած էր բանախօսել, որ ուշադիր բազմութեան մը իբր 50 վայրկեան խօսելու հաճոյքն ունեցաւ: Համառօտիւ խօսեցան նաև Տեարք Գազազպէղէզեան, Էկինեան և Զարշաֆճեան (Հոգաբարձութեան ատենապետն), և Տէրտրօջ պահպանիչովը վերջացաւ ժողովն:

***

Բարիզ, 30 Սեպտ. 1897

Հետեւեալը կը հաղորդեն մեզ Բարիզէն.

«Բարիզի Արծիւ—Պաշտպան Հայրենեաց միութիւնը, իր մինչեւ ցարդ ըրած հանգանակութեանց գումարը (ֆրանք 2090) *ազգօգուտ նպատակի մը համար գործածած է։»*

Կանխաւ յայտնելով մեր շնորհակալութիւնները, Միամ ի դիմաց Արծիւ Պաշտ. Հայր. միութեան

Քարտուղար

Կնիք *ՎԱՀԷ*

***

ԱՐԱԲՆԵՐՈՒ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ

Կ. Պոլսէն Հոկտ. 10 *Թուականաւ կը հեռագրեն Նիւ Եորքի ՍԸՆԻՆ թէ արաբական լուրջ ընդվզում մը տեղի ունեցած է ի Պուսորահ, Ասիական Թուրքիայում։ Երիզայէն զօրք յղուած է ի վայրըն։*

Ինպաստ Հայ տառապելոց հանգանակութիւնը Անգլիոյ մէջ կը շարունակուի շատ թոյլ կերպով, որպէս կ'երեւի Տէյլի—Նիւզի մէջ հրատարակուած վերջին ցուցակէն։ Միայն քիչ աւելի քան 74 *հազար ոսկի է համագումարը՝ Սասնոյ կոտորածէն ի վեր։*

Ասոր բաղդատէ ինպաստ Հնդկաստանի սովելոց եղած Անգլիական հանգանակութիւնն, որ է, թէեւ աւելի կարճ ժամանակի մէջ ժողոված, աւելի քան 565 *հազար ոսկի։*

***

Գերմանիա տարին 5,000,000 *տոլարի արժէքով գիրք կը ներածէ օտար երկիրներէ։*

Նիւ Եորք քաղաքին հանրային դպրոցաց ելմտացոյցը, ներկայ տարուան համար, կը ցուցնէ 6,843,450 *տոլարի ծախք։ Այս աճագին գումարին* 4,564,155 *տոլարը ուսուցողաց թոշակ է* ,317,000 *ը դռնապանաց։ Երեկոյեան դպրոցաց ուսուցիչներու եւ դռնապանաց թոշակ՝* 195,500*։ Դպրոցական պիտոյքի, թղթի, գրքի, աշխարհացոյցներու համար՝* 508,691*։ Գործաւորներու բանախօսութեանց համար՝* 60,200*։*

***

ԳԱԲՐԻԷԼԵԱՆ ԵՂԲԱՐՔ

220 Bergenline Ave, Union Hill, N. J.

Եունըն Հիլ, ՆՈՒ ՃԷՐԶԻ

Այս վաճառատան մէջ կը ծախեն անհաւատալի աժանութեամբ մահճակալ (bed—stead), *կարպետ, մոմաղօծ կտաւ* (oil—cloth) *եւ* (lanolium), *պատկերի շրջանակ եւ պատկեր, աթոռ, նստարան, սեղան եւ այլ տնական կահ կարասի։ Նաեւ կը գործեն կարպետ* (rag carpet)*։*

Կը փափաքինք ունենալ rag carpet *գործող փորձ ոստայնանկ մը հայազգի. դիմել վերոյիշեալ հասցէին։*

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ս. ԴԱՒԹԵԱՆԻ

ՓՆՋԱԿ Պատկերազարդ եւ Խօշօրագիր, Կ. Տպագրութիւն 1897, *էջ* 48*։—Արձակ եւ ոտանաւոր փոքրիկ հատուածներու վրայ մանուկները կը վարժուին ընթերցանութեան եւ արտասանութեան. Նիւթերն են շա՛տ պարզ եւ փոքրիկ տղոց ընտանի. լեզուն՝ նոյնպէս։* *Գին* 1¼ *դահ.*

ՓՈՒՆՋ Հաւաքածոյ Աշխարհաբար Լեզուի, Կ. Տպագրութիւն 1895. *էջ* 96։—*Զուտ ազգային առակներ, երգեր, մանրավէպներ, բարոյական եւ գիտական հատուածներ, եւ այլն։ Ամէն նիւթի անմիջապէս կը յաջորդէ բարոյական առած մը որ կ'ամփոփէ նիւթին իմաստը։ Հոգ տարուած է որ հատուածները՝ թէ՛ իմաստի եւ թէ՛ լեզուի կողմանէ յարմար ըլլան տղոց ըմբռնումին։* *Գին* 3 *դահ.*

ՃԱՇԱՐԱՆ ԵՒ ՀԻՒՐԱՆՈՑ

ԼԱՆԹԷԼՄԻ

Նախաճաշ	40 *սէնթ*
Կէս աւուր ճաշ	40 *սէնթ*
Ընթրիք	75 *սէնթ*

Գինւով մէկտեղ

Սենեակի վարձք Հօթէլին մէջ

օրը 75 *սէնթ*

40 Union Square (East side) bet. 16th & 17th sts.

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7*դ. Էվինիու* *Նիւ Եորք*

26*դ. եւ* 27*դ. Փողոցներուն միջեւ*

Դեղագրեր կը շինուին խնամով

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍԸՆԻ

ԴԵՂԱՐԱՆԸ

Կը գտնուի ի թիւ 262 Ութերորդ էվընիւ, Մեծ Օբէրային հանդէպ, 23 և 24 րդ փողոցներուն միջև։

Վստահելի դեղեր, բանաւոր գներով կը ծախենք։

ԹԻՔԷԹ

Երկաթուղիի և նաւու թիքէթներ աշխարհի ամեն մասին համար։

Փոխ—գիր և «մընի օրտըր,»

Փոխանակութիւն օտար դրամոց

Աժան թիքէթի (տոմսի) համար դիմէ միշտ ԳԼԽԱՒՈՐ ԳՐԱՍԵՆԵԱԿՆ Ի ՊՈՍԹՈՆ

15 State Street.

A. E. Johnson & Co.

Boston, Mass.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՆ ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏԷՐՈՒԹԻՒՆՔ

Ատենախօսութիւն Մ. Ս. Գաբրիէլեանի Առ Ամերիկեան Եկեղեցիս,

Հանդերձ Անգլիերէն բնագրովն

32 երես։

Այս ատենախօսութիւնը կը ցուցնէ Տէրութեանց պատասխանատուութիւնը հայոց կոտորածներուն համար և կ'արտայայտէ Հայ ազգին խուլբ բարկութիւնը Եւրոպիոյ դէմ։

Գինն է 10 սէնթ կամ 50 սանթիմ։
Գրել ՀԱՅՔի խմբագրին։

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց ետ թին, որք են ԶԷՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՋԱ'ՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳՔ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես։ 1893

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես։ 1894

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն. արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Քսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան.— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ԳՆԴՈՒՄՆ, ՈԼՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՇԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ուկէս Ֆրանք կամ 1 րուպլի (50 սէնթ։) Ութածալ 120 երես։ 1891

FACTS ABOUT ARMENIA

This pamphlet contains a report of the Sassoon massacre by a native refugee, the great Chester speech of Mr. GLADSTONE on Armenia and the renowned article of Dr. Dillon on the fearful condition of Armenia for many years before the late massacres.

Price 15 cents.—To write to the Editor of HAIK, 341 W. 23d St.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ